ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ՅԵՆԹԱԿԱ ՉԵ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ՍԱՅԼ ՈՒ ԼԾԱՍԱՐՔ»-Ի ՖՈՆԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՈՒ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936

Պատվեր № 453
Գլավլիտի լիազոր № 1075
Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան № 11

30 JAN 2018

# ՀՐԱՀԱՆԳ

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ՍԱՅԼ ՈՒ ԼԾԱՍԱՐՔ»-Ի ՖՈՆԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՅԵՎ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I. ՖՈՆԴԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. ԽՍՀՄ Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի 1935 թ. հոկտեմբերի 7-ի № 20—2264 վորոշման հիման վրա սայլեր ու լծասարք ունեցող բոլոր կոլտնտեսությունները պարտավոր են 1936 թ. հունվարի 1-ից իրենց տնտեսություններում ստեղծել «պաշտպանությանը՝ սայլ ու լծասարք»-ի ֆոնդ։

2. «Պաշտպանությանը՝ սայլ ու լծասարք»-ի ֆոնդը մշտական ֆոնդ ե և անպայման լրացվում ե, յերբ այն հանձնվում ե Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակին։

### II. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՖՈՆԴՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՆՈՐՄԱՆԵՐԸ

3. Գումակի և լծասարքի ֆոնդ ունեցող բոլոր տնտեսությունները պարտավոր են միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ֆոնդը միշտ պատրաստ լինի հանձնելու համար։

4. Պաշտպանության ֆոնդի համար սայլերն ու լծասարքն առանձնացվում են հետևյալ նորմաներով.—

Այն կոլտնտեսությունները, որոնք ունեն ոչ ավելի քան 50 տնտեսություն՝ առանձնացնում են 1 սայլ իր լծասարքով. 51-ից մինչև 100 տնտեսություն ունեցող կոլտնտեսություններն առանձնացնում են 2 սայլ՝ լծասարքով. 100-ից ավելի տնտեսություն ունեցողներն առանձնացնում են 3 սայլ՝ լծասարքով։

5. Ֆոնդի համար առանձնացվում են լավագույն, բանակի ծառայության համար միանգամայն պիտանի սայլեր (թափքերն ու անիվները), յերկաթե սռնիներով և առաջին հերթին ռազմականացված ստանդարտ տիպի յերկձի սայլեր՝ նրանց լրիվ կոմպլեկտ ստանդարտ լծասարքով, պահունի մասերով ու պատկանելիքներով՝ № 1 հավելվածով սահմանված ցուցակի համաձայն։

Ծանոթություն. Տնտեսությունում յերկձի ստանդարտ սայլեր չլինելու դեպքում թույլատրվում է ժամանակավորապես առանձնացնել ֆոնդի համար միաձի ստանդարտ սայլեր անպայման քեղի (դիշլայի) այնպիսի հարմարանքով, որ հնարավոր լինի ձևափոխելու այն յերկձի սայլի։

Առանձնացվող լծասարքը պետք է լինի անպայման յերկձի սայլի համար և այնպիսին, որը պիտանի լինի յերկար ժամանակով գործադրելու համար։

6. Ֆոնդի առանձնացման, գրության ու հաշվառման համար պատասխանատու յեն կոլտնտեսությունների նախագահները։

Նրանք պարտավոր են.

ա) կազմակերպել ամենօրյա հսկողություն ֆոնդի գրության վրա և ամենափոքր անսարքություն հայտաբերելու դեպքում պետք է անմիջապես կատարեն համապատասխան վերանորոգումը.

1-36409գր



բ) ամրացնել ֆոնդի սայլերն ու լծասարքը լավագույն բրիգադներին և առանձին հարվածայիններին.

գ) օգտագործել տնտեսության մեջ ֆոնդի սայլերն ու լծասարքը նվազագույն բեռնավորումով, չթույլատրելով հեռավոր ու յերկարատև յերթևեկություն կատարելը.

դ) չթույլատրել ֆոնդի սայլերի ու լծասարքի ոչ մի փոփոխում, առանձին մասերի հանում ու փոխարինում.

ե) ֆոնդի սայլերն ու լծասարքը պահել հարմարեցված շենքերում—սարայներում, աշխատանքից հետո պատշաճ դրության մեջ դնելով սայլերն ու լծասարքը (մաքրել ցեխից, փոշուց, յուղել մետաղե ու շփվող մասերը և ձիասարքը)։

7. Սայլերի ու լծասարքի վերանորոգումը կատարվում է համապատասխան կոլտնտեսության կողմից իր դարբնոցներում և արհեստանոցներում, կամ ՄՏԿ-ների արհեստանոցներում՝ վերանորոգումը կատարող տնտեսությունների հաշվին։

## III. «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ՍԱՅԼ ՈՒ ԼԾԱՍԱՐՔ»-Ի ՖՈՆԴԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Հաշվառման յենթակա յեն ֆոնդի համար առանձնացված բոլոր սայլերը, լծասարքը, պահեստի մասերն ու նրանց պատկանելիքները։

9. «Պաշտպանությանը՝ սայլ ու լծասարք»-ի

ֆոնդ ունեցող բոլոր տնտեսությունները հանդիսանում են հաշվառման սկզբնական օրգաններ, վորոնք պարտավոր են.

ա) վարել ֆոնդի սայլերի ու լծասարքի քանակի ու վորակի մշտական հաշվառումը՝ հաշվառման քարտերի համաձայն (հավելվ. № 2).

բ) հայտնել գյուղխորհուրդներին տարեկան մեկ անգամ ֆոնդի սայլերի ու լծասարքի առմեկն հունվարի առկայության և դրության մասին (№ 3 հավելվածի ձևով), վոչ ուշ քան հաշվետու ամսից հետո հաջորդ ամսվա 10-ը:

10. Գյուղխորհուրդները միավորում են կոլտնտեսությունների հաշվետու տվյալները, վարում են գումակի ու լծասարքի ֆոնդի հաշվառումը պարբերաբար ճշտելով այդ տեղեկությունները և ներկայացնում են այդ տեղեկությունները շրջգործկոմին (շրջանային ռազմական տեսչին) տարին մեկ անգամ նույն ամսաթվի դրությամբ 4-րդ ձևի համաձայն:

11. Հաշվառման կանոնները չպահպանելու համար հանցավորները յենթակա յեն պատասխանատվության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով:

## IV. ԳՈՒՄԱԿԻ ՈՒ ԼԾԱՍԱՐՔԻ ՖՈՆԴԸ ԲԳԿԲ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

12. «Պաշտպանությանը՝ սայլ ու լծասարք»-ի ֆոնդի սայլերն ու լծասարքը ԲԳԿԲ զորամասերին ու հիմնարկներին հանձնելը կատարվում է Պաշտպանության Ժողկոմատի տեղական օրգանների կողմից



նշանակված համապատասխան հանձնաժողովների միջոցով։ Ֆոնդի հանձնումը կարող է տեղի ունենալ շրջանային ռազմկոմիսարիատի հանձնման կետերում, անմիջականորեն տնտեսությունում կամ զորամասի տեղավորման վայրում։

13· Ընդունելության կարգն ու ժամկետները սահմանում են Պաշտպանության Ժողկոմատի տեղական օրգանները, վորոնք գործում են վերադաս ինստանցիաների հատուկ ցուցումների հիման վրա։

Ծանոթություն: «Պաշտպանությանը՝ սայլ ու լծասարք»-ի ֆոնդը կարող է ներգրավել զորամասերի ամեն տեսակ վարժական ու յերկրային հավաքներին՝ մարզային (յերկրային) գործկոմների և Պաշտպանության Ժողկոմատի օրգանների հատուկ թույլտվությամբ:

14. Ֆոնդը Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակին հանձնելիս կոլտնտեսությունները պարտավոր են.

ա) ստուգել ԲԳԿԲ հանձնվող գումակի ու լծասարքի լիակատար սարքինությունը.

բ) ստուգել սահմանված ցուցակի համաձայն պահեստի մասերով, գործիքներով և պատկանելիքներով ապահովված լինելը.

գ) տանել գումակի ու լծասարքի ֆոնդը սարքին դրությամբ շրջռազմկոմիսարիատի կողմից սահմանված վայրը և հանձնել այն ԲԳԿԲ-ին՝ հաշվառման քարտերով. ստանալով համապատասխան անդորրագրեր (հավելված 5-րդ):

15. Պաշտպանության Ժողկոմատի տեղական օրգաններն ապահովելու համար զորամասերն ու զորական

հիմնարկները ռազմականացված գումակով ու լծասարքով, պարտավոր են պարբերաբար ստուգել ֆոնդի դրությունն ու պահպանումը։

## V. «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ՍԱՅԼ ՈՒ ԼԾԱՍԱՐՔ»-Ի ՖՈՆԴԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

«Պաշտպանությանը՝ սայլ ու լծասարք»-ի ֆոնդի լրացումը կոլտնտեսությունները կատարում են, գնելով ստանդարտ տիպի այն սայլերն ու լծասարքը, վոր ժողովրդական տնտեսության համար արտադրում է արդյունաբերությունը։

ՀՍԽՀ Հողժողկոմ Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՀՍԽՀ Հողժողկոմատի հատուկ բաժնի պետ՝ Բ. ՀՈՎՍԵՓՅԱՆ





### ՊԱՏԿԱՆԵԼԻՔՆԵՐ ՅԵՐԿՁԻ ՍԱՅԼԻ ՀԱՄԱՐ

| Իրերի անունը | Քանակը | Ծանոթություն |
|---|---|---|
| **Պատկանելիքներ յերկձի սայլի համար** | | |
| Ցուցաման անվայուղի համար | 1 | 1) Ճուլկի (բուլիքը) բաց է թողնվում միայն այն սայլերի հետ, վորոնք չունեն սռնակի պտուտակավոր պնդողակներ (պտուտակամերեր)։ |
| Պնդողակի բանալի | 1 | |
| Ձմրան յերկաթե արգելակ (տորմուզ) | 1 | |
| Ամրան պարանե արգելակ | 1 | |
| **Պատկանելիքներ յերկձի լծասարքի համար** | | 2) Կոմպլեկտը 10 սայլի համար, յերբ ֆոնդը 10 սայլից ավելի չէ։ |
| Ախոռի պահուց | 1 | 3) Սռնակի բանալիները բաց են թողնվում միայն այն սայլերի հետ, վորոնք ունեն պնդողակներ։ |
| Քերոց | 1 | |
| Ձիու խոզանակ | 1 | |
| Ջրելու դույլ | 1 | 4) 1 անիվ յուրաքանչյուր 10 սայլի համար։ |
| **Պահուստի իրեր յերկձի սայլի համար** | | |
| Փոկափայտ | 1 | |
| Քեղ (դիշլո) | 1 | |
| Գործելի | 1 | |
| Ճուլկի[1] (բուլիք) | 1 | |
| Սռնակի պնդողակ[2] (պտուտակամել) | 1 | |
| Սռնակի բանալին[3] | 1 | |
| Պահուստի անիվ[4] | 1 | |

### ՀԱՎԵԼՎԱԾ № 2

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՍԱՅԼԻ ՈՒ ԼԾԱՍԱՐՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏԸ

..............................................................................................

(Կոլտնտեսության, գյուղխորհրդի ու շրջանի անունը)

Առանձնացված է ֆոնդի համար «. . . . .» ——————— 193 . . թ

Սայլի տիպը

1. . . . . . . . . . . . . . .
(միաձի թե յերկձի)

2. . . . . . . . . . . . . . .
(սարքավորումը)

3. . . . . . . . . . . . . . .
(դրությունը)

4. . . . . . . . . . . . . . .
(վորտեղ է պահվում)

5. . . . . . . . . . . . . . .
(ով է պատասխանատու պահպանման համար)

Լծասարք

1. . . . . . . . . . . .

2. . . . . . . . . . . .
(դրությունը)

3. . . . . . . . . . . .
(պահպանումը)

4. . . . . . . . . . . .
(ով է պատասխանատու պահպանման համար)

Ստորագրություններ՝

Գյուղխորհրդի նախագահ՝ Կոլտնտեսության նախագահ՝

«. . . .» . . . . . . . . 193 . . թ.

______________________________________________

(կտրելու գիծը)

Ընդունված սայլի հաշվառման քարտի կոճղիկը

______________________________________________

(տնտեսության անունը)

Լրիվ հասցեն ..............................................................

Սայլի տիպը ——————— Գինը ..............................
(լծասարքի հետ)

Ընդունման հանձնաժողովի նախագահ՝

«. . . .» ——————— 193 . . թ.





| №№ ը/կ. | Անունը | Քանակը | №№ ը/կ. | Անունը | Քանակը |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | 1 | | |
| 2 | | | 2 | | |
| 3 | | | 3 | | |
| 4 | | | 4 | | |
| 5 | | | 5 | | |
| 6 | | | 6 | | |
| 7 | | | 7 | | |
| 8 | | | 8 | | |
| 9 | | | 9 | | |
| 10 | | | 10 | | |

(Left half: Սայլի պահունի մասերն ու պատկանելիքները; right half: Լծասարքի Պատկանելիքները)

Զննված է
«. . .» . . . . . . . . 1936 թ.
Ճանաչված է . . . . . . .
(դրությունը)
Կնիք

Զննված է
«. . .» . . . . . . . . 1936 թ.
Ճանաչված է . . . . . . .
(պահպանման դրությունը)
Կնիք

______________________________________________

և այլն — և այլն

______________________________________________

և այլն — և այլն

______________________________________________

և այլն — և այլն

______________________________________________

### Հաշվառման կանոնները

1. Ֆոնդի համար առանձնացված յուրաքանչյուր սայլ պետք է ունենա իր հաշվառման քարտը։

2. Քարտը պահվում է տնտեսության մեջ և ներկայացվում է ստուգության իրավունք ունեցող անձանց։

## ՀԱՇՎԵՏՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

### Կոլտնտեսությունում «պաշտպանությանը՝ սայլ ու լծասարք»-ի ֆոնդ ստեղծելու մասին

1. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
(Կոլտնտեսության անունը) (Գյուղխորհրդի, շրջանի անունը)

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
(կոլտնտեսությունների թիվը) (որ ժողկոմատին է յենթակա)

| Սայլերի ու լծասարքի առկայությունը | | | | | | | Առանձնացված է պաշտպանության ֆոնդի համար | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սայլեր | | | | Լծասարք | | | | |
| Ռազմականացված սայլեր | Միաձի՝ յերկաթե առանցքով | Միաձի՝ փայտե առանցքով | Ընդամենը սայլերի քանակը | Յերկձի սայլերի լծասարք | Միաձի սայլերի լծասարք | Ընդամենը լծասարքի քանակը | Ռազմականացված ստանդարտ սայլեր | Յերկձի սայլերի ստանդարտ լծասարք |
| | | | | | | | | |

Ծանոթություն. Այս ձևով տեղեկությունները կոլտնտեսությունների կողմից ներկայացվում են գյուղխորհուրդներին տարեկան մեկ անգամ առ մեկն հունվարի։

Կոլտնտեսության նախագահ՝ . . . . . . . . .





## ՀԱՇՎԵՏՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

. . . . . . . . . . Շրջանի . . . . . . . . Գյուղխորհրդի

### Պաշտպանության ֆոնդի համար առանձնացված սայլերի ու լծասարքի հաշվառման մասին

| Տնտեսության անունը | Տնտեսությունների քանակը | Սայլերի առկայությունը | | | | Լծասարքի առկայությունը | | Առանձնացված է ֆոնդի համար | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Յերկձի ռազմականացված ստանդարտ տիպի | Միաձի յերկաթե առանցքով | Միաձի փայտե առանցքով | Ընդամենը սայլերի քանակը | Ստանդարտ յերկձի սայլի համար | Միաձի սայլի համար | Յերկձի ռազմականացված ստանդարտ տիպի | Ստանդարտ յերկձի լծասարք |
| "Արշալույս» կոլտնտեսություն. | 50 | 10 | 20 | 15 | 45 | 10 | 35 | 1 | 1 |
| «Ազատություն» կոլտնտեսութ. . | 200 | 25 | 40 | 30 | 95 | 25 | 70 | 3 | 3 |
| և այլն . . . . | | | | | | | | | |
| Ընդամենը գյուղխորհրդում . . | — | — | — | — | — | — | — | — | — |

Ծանոթություն. 1. Գյուղխորհրդում այս ձևով տարվում է գյուղխորհրդի մեջ մտնող բոլոր կոլտնտեսություններում պաշտպանության ֆոնդի համար առանձնացված սայլերի ու լծասարքի հաշվառումը։

2. Այս ձևի համաձայն գյուղխորհուրդը տեղեկությունները ներկայացնում է շրջգործկոմին (շրջանային ռազմական տեսչին) տարին մեկ անգամ՝ առ 1-ն հունվարի դրությամբ։

### ՀԱՎԵԼՎԱԾ № 5

№ . . . . .

Անդորրագրի արմատը

Կ տ ր մ ա ն  գ ի ծ

ԱՆԴՈՐՐԱԳԻՐ № . . . .

. . . . . . . . . . . . . . Շրջզինկոմատի

Ընդունիչ հանձնաժողով

Ընդունված է . . . . . . . . . . . . . . .
(կոլտնտեսության ու շրջանի անունը)

. . . . հատ . . . . . . . . . ֆոնդի սայլ
(քանի հատ և ինչպիսի սայլ)

. . . . . . . . . . . . . . ֆոնդի լծասարք
(քանի հատ և ինչպիսի լծասարք)

Վճարման յենթակա յե . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
(Պետբանկի ֆիլիալի անունը)

. . . . . . . . . . . . . . . . . . . . . ռուբլի
(գումարը գրել տառերով)

Ընդունիչ հանձնաժողովի
նախագահ՝

Կ. Տ.



ՀՀ Ազգային գրադարան
NL0937745

9 ИЮЛ 1956
491
1
3640